



## ՎԱԼԵՐԻ ՄԻՌԶՈՅԱՆ

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի պրոֆեսոր,  
փիլիսոփայական գիտությունների դոկտոր

### ՀԱՆԴՈՒՇՈՂԱԿԱՆ ԽՈՍՔԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ\*

Մի ընտանիք, մի հասարակութիւն, մի ժողովուրդ ճանաչելու համար  
պէտք է լսել նորա մէջ հնչող խօսքը:  
**Գարեգին Նժենի**

Հոդվածում քննարկվում են հանրային կառավարման համակարգում միջանձնային խոսքային հաղորդակցման հիմնախնդիրները, մասնավորապես՝ խոսքային անհանդուրժողականության ու հանդուրժողականության դրսնորումները և դրանց փաստարկային հիմքը: Որպես վերլուծության նյութ դիտարկվում են խնդրո առարկային առնչվող՝ հայ գրականության մեջ առկա արձանագրումները և մտորումները: Բանակեծ – վիճաբանություն – վեճ փոխակերպումը դիտարկվում է իրունք հանդուրժողականից անհանդուրժողական խոսքին անցում, արկում են որոշակի եզրակացություններ առավելագույն համրութելի խոսքային հաղորդակցում ապահովելու պայմանների վերաբերյալ: Հիմնավորվում է հայոց առածանու լայն գործածությունը որպես հանդուրժողական խոսքի վարքականոն:

**Հիմնաբառեր.** հանրային կառավարման համակարգ, անհանդուրժողականություն, հանդուրժողականություն, հանդուրժողական խոսք, բանակեծ, վիճաբանություն, վեճ, առածանին՝ վարքականոն

JEL: B41, B59, R10, Z00, Z19

\* Հոդվածի առավել ծավալուն տարրերակը ներկայացվել է «Եվրասիա–համագործակցություն» հիմնադրամի 2016 թ. մայիսին հայտարարված «Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսնորումները հայ գրականության մեջ» խորագրով հետազոտությունների բաց մրցույթին և դարձել հաղթողներից մեկը:

### **Հանդուրժողական խոսքը՝ համակեցության պայման**

Հանրային կառավարման համակարգը ոչ միայն հաստատությունների և կառույցների, դրանց գործունեության և գործակցության սկզբունքների ամբողջություն է, այլև խոսքային հաղորդակցման բազմաձյուղ համակարգ, որում անվերջ տեղի է ունենում միջանձնային հաղորդակցում՝ գրավոր կամ բանավոր, դեմաօդեմ կամ տեխնիկական միջոցներով միջնորդավորված, իրավական կամ բարոյական հիմքով, պաշտոնական կամ չձևայնացած, վեր ու վար կամ հորիզոնական ուղղություններով։ Խոսքային հաղորդակցումը հանրային կառավարման հաստատությունների «անորմային» համակարգն է, սնուցում է հսկա բոլոր նակարդակները, ապահովում դրանց ներդաշնակ գործառությունը, ինչպես նաև տարատեսակ քննարկումները, խորհրդակցությունները, բանակցությունները և գործարար հաղորդակցման այլ տեսակներ։ Իսկ ինչպիսի՞ն է այդ խոսքը, որքանո՞վ է նպաստավոր մարդկանց համախմբնան, ջանքերի համատեղման տեսանկյունից։ Որքանո՞վ է մեր խոսքը փոխադարձաբար հանդուրժողական, ինչպես խուսափենք անհանդուրժության դրսերումներից։

**Հանդուրժողական խոսքը հաղորդակցման այն տեսակն է, երբ կողմերը պատրաստակամ են հարգանքով, համբերությամբ և ուշադրությամբ ունկնդրելու դիմացինի՝ սեփականից տարբերվող, անգամ դրան արմատապես հակասող դատողությունները։ Նման խոսքային վարքագիծը միանգամից ձեռք չի բերվում, դիմացինին համբերատար և առանց ընդհատելու լսելու կարողությունը երկարատև դաստիարակության և ինքնադաստիարակության արգասիք է։ Կա հիճանվուրց մի ձևակերպում, մարդուն երկու տարի է պետք խոսել սովորելու, իսկ լռել և լսել սովորելու համար՝ ամբողջ կյանքը։ Լսելու կարողությունը հանդուրժող խոսքային հաղորդակցման անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է. կարևոր է այլակարծության հանդեպ հարգալից վերաբերմունքը, միակողմանիությունից գերծ մնալը, պատշաճ վարվելակերպը, նյութին համարժեք և զրուցակցի ընկալմանը համապատասխան բառապաշտի և ոչի գործածությունը, քաղաքակիրք բանավիճելու մշակույթը, անպտուղ բախումից խուսափելու, խելամիտ փոխվիճման գնալու տրամադրվածությունը, ներողամտությունը, բարյացակամությունը և այլն։**

Մարդկանց համակեցության մեջ հանդուրժողական խոսքի կարևորությունը գիտակցելու համար վերիիշենք, թե ինչ ավերածություններ է գործում անհանդուրժող խոսքը, այսինքն՝ ուրիշի կարծիքի բացահայտ անտեսումը և նույնիսկ դրա իրավունքի բացառումը, միայն սեփականը ճշմարիտ համարելը. կոյսր համառությունը, տարակարծությունը մերժելու անսքող դիրքորոշումը և դրանից բխող գործնական քայլերը՝ փոքրամասնության հանդեպ խտրականությունից մինչև ֆիզիկական ոչնչացում։ Սեփական խոսքը բացարձակ ճշմարիտ հրչակելն է, որ վերածվում է ուրիշներինը մերժող արարքի, գործողության, դիրքորոշման, վերաբերմունքի։ Խնդրի լուծումը, հետևաբար, խոսքային հաղորդակցման մշակույթն է, ամենից առաջ՝ վիճարվեստի հիմունքների արմատավորումը, երկխոսություն վարելու և արդյունավետ հաղորդակցման հմտությունների ձևավորումը։ Անտարակույս, հանդուրժողական խոսքը, աստիճանաբար տարածվելով ամբողջ հասարակության մեջ, այն կդարձնի առավել ազատական և ժողովրդավարական։

Խոսքային անհանդուրժողությունը հետևանք է շտապողականության, վատ ունկնդրման, զրուցակցին ընդհատելու սովորության, կանխակալ վե-

րաբերմունքի, սեփական գերազանցության գգացողության, բարձր ինքնազմահատականը պահպանելու դիրքորոշման, քննադատության հիվանդագին ընկալման, լեզվական թյուրըմբռննան, չճշտված խնդրակի, ներկաների հավանության արժանանալու ծգտման, հուզախորհվ վիճակի, դատողության միակողմանիության, չափազանց համառության: Այս պատճառները մեզանից շատերը լիովին ունակ են հասկանալու և համապատասխան քայլեր անելու: Ամեն ոք, իսկապես, կարող է ըմբռնել սեփական շտապողականության, անհամբերատարության, անուշադիր ունկնդրման, ծայրահետ համառության, դիմացինին ընդհատելու վնասակար ագրեցությունը հաղորդակցման վրա: Մարդկանց մեծ մասը դժվար է տանում տիած խոսակցությունը, անպտուղ վեճը, հատկապես հարազատների կամ համախոնների հետ չնչին առիթով ծագած վիճաբանությունը: Հետբախումնային փուլում մարդը հակված է ինքնավերլուծության, ինչն օգտակար է խոսքային վարքագիր բարելավման համար: Շատ ավելի դժվար է ըմբռնել գերբարձր ինքնազմահատականի, քննադատական խոսքի հիվանդագին ընկալման, կանխակալ վերաբերմունքի, անբոխահաճությանը հակվածության, միակողմանի մոտեցման հանգամանքը, առավել ևս խաթարող ագրեցությունն իր խոսքային վարքագիր վրա: Մեզ խանգարում է ինքնարդարացումը, հոգեկան ինքնապաշտպանության հզոր կառուցը, որի միջոցով մեզանից վանում ենք սեփական մեղավորությունը, որոնում՝ այլոցը:

Այդ առումով բացարիկ օգտակար է «կողքից» ուսումնասիրությունը, երբ սեփական վարքութարքը դիտարկում ենք հայ գրականության էջերում: Ուշադիր թերթելով դրանք՝ նախնիների կամ ժամանակակիցների կենդանի պատկերների ձևով տեսնում ենք հայերիս համակեցության բոլոր դրսնորումները, այդ թվում՝ միջանձնային խոսքային հաղորդակցման արանձնահատկությունները, տարբեր թեմաներով զրուցակիցների դատողությունների ծավալման ընթացքը, միջյանց համոզելու հնարքները, փոխսադարձ վերաբերմունքը: Հատկապես ցայտուն են համդուրժող–անհանդուրժող խոսքի երկընտրանքի որոշակի լուծումները. կարող ենք ասել, որ հայ գրականությունը հայոց խոսքային վարքագիր յուրատեսակ հայելին է: Արդեւ պարզել, թե ի՞նչ կերպ են զրուցում, բանավիճում հայ մարդիկ, որքանո՞վ են հանդուրժող սեփականից տարբերվող այլ կարծիքի, համոզմունքի, հավատքի, դիրքորոշման, վարվելակերպի հանդեպ: Իրենց անհամաձայնությունն ինչպես են արտահայտում, ի՞նչ փաստարկներ, ի՞նչ հնարքներ են գործադրում: Հայ գրողները ուղղակի կամ միջնորդավորված ի՞նչ խորհուրդներ են տալիս ընթերցողներին միջյանց ավելի համբերատար և հարգալից լսելու, ըմբռնելու, հանդուրժելու, հաշտ մնալու, փոխզիջման պատրաստակամության մասին: Սա, իհարկե, ընդգրկուն հարցադրում է. մեկ հոդվածով կարող ենք խնդրի լուծման առաջին քայլն անել: Առավել կարևորը, թերևս, շոշափվող թեմայի ազգային կարևորության ըմբռնումն է:

### **ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ Ազգային միարանության հիմք**

Հանրային կառավարումը մարդկանց՝ կառավարողների և կառավարվողների փոխսադարձ ազգային կազմով առավել միատարրերից է, ապա հայոց ազգամշակութային առանձնահատկությունները ինքնաբերաբար ազդում են թե՝ կառավարողների, թե՝ կառավարվողների վարքի, թե՝ հանրային կառավարման համակարգի գործառության ընդհանուր որակի վրա: Ասվածը բնավ

Էլ հանրային կյանքում ազգային գործոնի գերազնահատումը չէ. համոզվելու համար բավական է թերթել ճապոնացի հեղինակի որևէ հրապարակում՝ նվիրված կառավարման հիմնախնդիրներին: Ընդհանուր գիտական լուծումների կողքին տեսնում ենք ազգահատուկ լուծումներ՝ հատկապես միջանձնային հաղորդակցման կազմակերպման առնչվող: Գաղտնիք չէ, որ հետպատերազման ճապոնիայի զարմանահրաշ տնտեսական վերածննդի մեջ ծանրակշիռ դեր ունեցան ճապոնացիներին հատուկ որոշ գժեր, ամենից առաջ՝ միակամության և միաբանության դրսերումները:

Եթե խոսենք հայերից, ապա մեր անմիաբանության, փոխադարձ անհանդուժողականության մասին շատ է գրվել: Քանից պետություն ենք կորցրել, որովհետև քիչ թե շատ հզոր ամեն մի նախարար ձգտել է գլխին թագ դնել: Հայոց պատմության նորագույն շրջանում ևս քիչ կորուստներ չունեցանք՝ միաբանվելու անկարողության պատճառով: Արցախյան ազատամարտի շնորհիվ արթնացած և միասնական կամք դարձած հայությունը մի քանի տասնի անց սկսեց ջլատվել: Իշխանության և ընդդիմության անպտուի առձակատումը, կուսակցամոլությունը, ապաշնորհ կառավարիչների՝ ամեն գնով հշխանական բուրգում գտնվելու ձգտումը, խորհրդարանում առողջ բանավեճերի փոխարեն միմյանց սևացնելու ելույթները, անարժանների անօրեն բարգավաճումը և արժանավորների ճարահատյալ արտագաղթը, նորօրյա դրւապրծուկների ցոփ ապրելակերպը ժողովրդի մեծամասնության սուլ կենսապայմանների կողքին. այս և նման այլ երևոյթներ ուղղակի հետևանք են նաև հայերիս փոխադարձ անհանդուժողության: Իհարկե, պետականության վերականգնման ընթացքում նվազումներ էլ ենք ունեցել՝ 1988–1990 թվականների ազգային զարթոնքը, հայոց համախմբման պատմության «աստեղային ժամը», որոնց շնորհիվ ազատագրել ենք հայոց հինավորց տարածքները, ստեղծել ազգանպաստ կառույցներ, ամենից առաջ՝ հայոց բանակ, աճեցրել հպարտ հայորդիների նոր սերունդ, որ սրբագրելու է հայրերի և պապերի սխալները և, հիրավի, նոր Հայաստան է կառուցելու: Անտարակոյս, էական այլ բարեփոխումներ էլ են կատարվել, բայց դրանք տասնապատիկ կլինեին, եթե մեզ չխանգարեր փոխադարձ անհանդուժողությունը: Հիշենք (հարկադրյա) մի քանի արձանագրում.

- «Եթե զժուվեց մեկի հետ, ոխակալ է ինչպես ուղտ: Ամեն հայ մի հայ ունի, որի հետ թշնամի է մինչև մահ: Սա նրա անհրաժեշտությունն է: Ամկարգ է և անիշխանական թե՛ հասարակության, թե՛ պետության, թե՛ գաղափարների մեջ: Իբրև ժողովրդական՝ անմիաբան է, անտանելի, խռովարար»<sup>1</sup>:
- «Զկա երեսփոխան մ’որ հաճի յուր ընկերին վրա փշուր մ’արժանիք տեսնել: Ամենքը կ’ուզեն խելքի մենավաճառ կանգնիլ և չեն ներեր, որ ուրիշներն ալ քիչ մը խելք ունենան»<sup>2</sup>:
- «Խնդրում ենք ցոյց տալ մեզ երկու հայ, որ միասին խորհուրդ կատարած լինեին ազգի հառաջադիմության վերա.... Մի հայ, որ չէր սիրում ինձ,— իմ անձնավորությունը,— չկամի ընդունել և իմ բերանով քարոզված ծշմարտությունը առանց մտածելու, թե ես և իմ քարոզած

<sup>1</sup> Դ. Ղեմիրյան, Հայը // Երկերի ժողովածու տասնչորս հատորով, հատ. XIV, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, էջ 462:

<sup>2</sup> Հ. Պարոնյան, Օրակարգ // Երկերի ժողովածու տասը հատորով, հատ. 10, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, էջ 656–657:

Ճշմարտությունը ջոկ-ջոկ բաներ են, թե ճշմարտություն ասացյալը սեփականություն չէ Մարկոսի, Կիրակոսի....»<sup>3</sup>:

Ընդ որում, հատկապես ցայտուն է խոսքային անհանդուրժողականությունը՝ որպես հիմնական պատճառ անհանդուրժող վարվելակերպի մյուս տեսակների և, միաժամանակ, դրանց վերարտադրության մշտական ասպարեզ: Ի՞նչն է բնորոշ հայերին հաղորդակցմանը՝ լինի խորհրդարանական քննարկում, թե եեռուստաբանավեճ. հակված ենք մենախոսության, նախահարձակ ենք, գրկում ենք դիմացինին լիարժեք արտահայտվելու հնարավորությունից, մեր ասելիքը մեզ թվում է միակ ճշմարիտը, տրամադրված չենք քննարկելու ընդիմախոսի փաստարկները, չենք էլ խորանում նրա ասածների մեջ, այլ մերն ենք շարունակ պնդում, երբեմն, ցավոք, երկուստեք մոռանում ենք քննարկման բուն թեման, շեղվում, հիշում անցյալի ինչ-ինչ դեպքեր, հունից դուրս գալիս, սկսում միմյանց վիրավորել: Հազվադեպ է լուրջ հարցերի քննարկումը մինչև ավարտ անցնում նույնքան լրջմիտ, պատշաճ ոճով, փոխադարձ հարգանքի մթնոլորտում: Ավաղ, մեր քննարկումների ավարտը, որպես կանոն, թողնում է տիհած հետք, կորստյան, ոչ թե ձեռքբերումի գգացողություն, ափսոսանք գուր կորցրած ժամանակի համար:

- «Մենք այդ կողմից շատ հասարակ մարդիկ ենք. մեկ մեկու հետ ցեռեմոն, պատիվ-բան չգիտենք. այլ ռուսի կամ մի ուրիշ օտար մարդու հետ է, որ մեզ շենքով պահել գիտենք: Հայի որ հանդիպեցինք, ով կուզի թող լինի, չուզեցած տեղից էլ բերաններից գրեհիկ, անկարգ խոսքերը ջրի պես վազում են: Մեկս մեկի հետ նստած ելածներու էլ խախուլից էլ վատ է լինում. «Խևկ», ապուշ, զավաշկ, հայ քոր... մայրդիայրդ այսպես-այնպես», սա մեր ամենօրյա խոսքերն են, մեր գրուցի ու սոյբարի աղն ու տաքրեղը»<sup>4</sup>:
- «Եվ ամեն մի հայ համաձայն չի եղել մյուսի կարծիքին, այն էլ՝ նախօրոք, նախքան այդ կարծիքն իմանալը: Ամեն մի հայ համարել է, որ մյուսը սիսալ է ապրում ու դատում»<sup>5</sup>:
- «Այդ րոպեին գուգակշիր մը կընեի երկու վիճաբանություններու միջև: Քիչ առաջ, երբ թուրքին հետ կվիճեին, միակամ էին.քոլորը մեկ խելոք խոսքեր կինտրեին պատասխանելու համար հյուրանոցի տիրոջ. հիմա որ առանձին մնացինք, սկսան իրարու հետ այնպես վիճել, ու մեկը այնպես կընդուներ մեր լուծվելու հարցը, որ կարծես լուծված վերջացած էինք»<sup>6</sup>:

Իհարկե, հայ գրողները սա գրել են խոր ցավով, տրտնությամբ, նաև՝ համարձակությամբ, բայց և այն հոյսով ու վստահությամբ, որ ննանօրինակ ձևակերպումները ոչ թե խորացնելու են հայոց անմիաբանությունը, փոխադարձ անհանդուրժողականությունը, այլ ընդհակառակը՝ օգնելու են միաբանվելու, ավելի հանդուրժող լինելու միմյանց հանդեպ: Որքան էլ սուր են արձանագրումները, միևնույն է՝ դրանց նպատակը վեհ է ու առաքինի՝ **ազգային արթնություն**, սեփական թերությունները չնկատող, ամհանդուրժողականությունից տուժող ազգակիցների սթափ ինքնաձանաշում և ինքնազմահատում:

<sup>3</sup> Մ. Նալբանդյան, Հիշատակարան // Երկեր, Եր., «Սով. գրող», 1985, էջ 280–281:

<sup>4</sup> Ռ. Պատկանյան, Վարժապետ // Երկեր, Եր., «Սովետ. գրող», 1980, էջ 483:

<sup>5</sup> Պ. Զեյթունցյան, Արշակ Երկրորդ // Ընտիր Երկեր Երկու հատորով, հատ. 2, Եր., «Սովետ. գրող», 1987, էջ 244:

<sup>6</sup> Թ. Թորամյան, Կարոսի ճամփաներով, Եր., «Խորհրդային գրող», 1989, էջ 61:

Բնավ պատահական չէ նաև այն, որ հայ գրողները մշտապես կարևորել են խոսքի դերը համակեցության մեջ, ուղղակի հորդորել են հայոց առաջնորդներին ունակ լինել գործադրելու կառավարման ամենազորեղ այդ միջոցը: «Սրի գրությամբ թագք երկար ժամանակ գլխիդ պահել չես կարող.՝ հորդորում է քրմապետը արքային:— Պերճախոսությամբ են վարում տերության գործերը և հարատէ դարձնում իշխանությունը: Այս մասին հիշիր, Արտաշես, և արքայական վճիռներդ ի կատար ածելուց առաջ՝ դրանց մասին խորիիր գիշերը: Արամագդը ցանկանում է, որ դու մտահան չանես իր այս մեծ պատգամը»<sup>7</sup>:

Հովհաննես Թումանյանը ուշադիր է եղել խոսքային հաղորդակցման կարգավորմանը իրենց իսկ՝ գրողների, նաև գրքասերների շրջանում: 1918 թ. Հայ գրողների միության գրական երեկոների մեկնարկի առթիվ նա կարևորում է դրանք առավել հետաքրքրական և բովանդակալից դարձնելու, լավ նախապատրաստվելու և պատշաճ մթնոլորտում անցկացնելու անհրաժեշտությունը. «Բայց, որովհետև երեկոները լինելու են վիճաբանություններով ու ընդդիմախոսություններով, շատ ցանկալի է, որ կարծիք հայտնողներն ու վեծի մտնողները լրջորեն պատրաստված լինեն առաջուց ու նյութին ծանոթ, ընդդիմախոսությունները լինեն պատճառաբանված ու հիմնավորված և վիճաբանությունները կորեկտ: Լավ վիճաբանողները պետք է սովորեցնեն հասարակությանը, թե ինչ կնշանակի մի բան հասկանալ, ինչպես պետք է հասկանալ, ինչպես պետք է կարծիք հայտնել և ինչպես վերաբերվել հակառակորդին: Դա կլինի դպրոց»<sup>8</sup>: Ավելորդ չէ հիշեցնելը, թե մի առիթով ինչ է ասում Թումանյանը սեփական դիրքորոշման մասին. «Ամենայն հարգանքով լսել եմ ամենքին, որ խոսել են և լսելու եմ նրանց էլ, որ դեռ պետք է խոսեն»<sup>9</sup>:

Փաստորեն, Թումանյանը ձևակերպել է հանդուրժողական խոսքի ապահովման որոշ սկզբունքներ. ամենից առաջ՝ տարատեսակ քննարկումների ամեն մի մասնակից պարտավոր:

- ներկայանալ լրջորեն պատրաստ,
- նախապես իմանալ իմանական թեման,
- հակաֆաստարկելիս լինել իմանավոր,
- խոսել պատշաճորեն, հարգանք դրսելորել հակառակորդի խոսքի և անձի հանդեա:

### **Խոսքային հաղորդակցումը՝ փաստարկման տիրույթում**

Մարդը «փաստարկող կենդանի» է. ոչ միայն տեղեկություններ ենք հաղորդում՝ չեզոք մնալով ասվածի բովանդակության հանդեա, այլև ծգտում ենք համոզել գրուցակցին: Ահա թե ինչու խոսքը, որպես կանոն, լինում է փաստարկված, այսինքն՝ տրամաբանական կամ հուզական գանազան միջոցներով իմանավորված: Դա վերաբերում է թե՛ հանդուրժողական և թե՛ անհանդուրժող խոսքին: Երկու դեպքում էլ մեզ հետաքրքրում է, թե ի՞նչ դատողություններ են առկա միջանձնային խոսքային հաղորդակցման հիմքում, ինչո՞ւ կազմակերպության մի դեկավարի հաջողվում է առանց բախումների

<sup>7</sup> Հ. Խաչատրյան, Արտաշես, Եր., «Սովետ. գրող», 1980, էջ 9:

<sup>8</sup> Հ. Թումանյան, Հայ գրողների ընկերության գրական երեկոները // Ելժ, հատ. յոթերորդ, Եր.: «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» հրատ., 1995, էջ 23:

<sup>9</sup> Հ. Թումանյան, Անտեղի ու անպետք միջոց // Ելժ, հատ. յոթերորդ, Եր., «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» հրատ., 1995, էջ 26:

կառավարել, իսկ մեկ ուրիշ դեկավարի գրեթե ոչ ոք չի հանդուրժում: Պարզելով գործածվող փաստարկի տեսակը՝ կարող ենք հասկանալ անհանդուրժող խոսքի խորբային դրդապատճառները, ուստի և կանխել նման խոսքի գոյացումը կամ էլ աշնչազն մեղմել բացասական ազդեցությունը անհատի և հանրույթի կյանքում: Ինչպես անհանդուրժող խոսքի, այնպես էլ անհանդուրժողականության դրսևորման բոլոր տեսակների կանխարգելման համար որպես գերագույն պայման կարող ենք գնահատել Գարեգին Նժդեհի պահանջը. «Արդար լինելու համար՝ մարդկանց մեջ, թեկուզ թշնամիդ լինեն, փնտրիր նախ նրանց լրացվոր կողմերը: Ակսեցի՞՞ր բացասականներից՝ պիտի չնկատես դրականները, վասնզի պիտի չուզենաս նկատել»<sup>10</sup>:

Դիմացինի հանդեպ ակնհայտ անհանդուրժողությունը լինում է բացահայտ, հարձակողական, երբ հիմքում գրուցակիցների աշխարհայացքային անհաշտելի դիրքորոշումներն են, միմյանց բացառող կենսակիլիսովիայությունները: Հրանտ Մաթևոսյանի «Տերը» վիպակում բախվում են անտառապետ Ռոստոմը և գյուղերի խոշորացման նպատակով քաղաքից դեկավար կարգված անձնավորությունը: Գյուղի քայլքայման վտանգը զգացող և որպես սեփական աշխարհի փլուզում ընկալող անտառապահ Ռոստոմը շիփշիտակ արտահայտում է զայրույթը.<sup>11</sup>

- Առաջին օտարը դու ես,— ասացինք,— քեզանից սկսվեց, ընտանիքը քաղաքում է, միտք ու սիրոտ քաղաքում են, գյուղը քեզ համար մառան է, ով քամի ուզ ունի, որ պարավը քանի հավ... պաշտոնից կիանեն՝ գյուղից ոստի էլ կվտրես: Ամենաօտարը հենց դու ես,— ասացինք:
- Վիրավորում ես,— ասաց,— կվիրավորվեմ, շատ ուժեղ կվիրավորվեմ:
- Վիրավորում եմ՝ որ վիրավորվեմ,— ասացինք,— հենց վիրավորելու համար եմ վիրավորում... Իրավունքները էս գյուղից քաշիր, կենտրոնին ասա՝ հարթեցող եմ, ի վիճակի չեմ, մարդ եղիր, հասկացողություն ունեցիր ու հասկացիր, որ էս հացը՝ որ էս գյուղում քու առաջ են դնում, թքած է, վրան թքած է:

Անհանդուրժողականության գոյացման պատճառներից մեկը կեղծիքն է: Կեղծավորությունը ահավոր ավերածություններ է գործում մարդկանց կյանքում, բայց հատկապես աններելի, գարշելի է կեղծ խոսքը: Ավետիք Իսահակյանի ձևակերպմամբ՝

*Մարդկային լեզու, դու որ երկնային բույրով ու թույրով, շղարշով պայծառ Ծածկում ես մարդու դժոխքը հոգու, ոգե՞լ ես արդյոք ճշմարիտ մի բառ<sup>12</sup>:*

Ուստի դիմացինի համար ենթադրաբար անհանդուրժելի որևէ խոսք սկսելիս մարդիկ իիմնավորում են անկեղծության պարագայով: Այդպես է վարվում Գևորգ Մարգաբետունին, երբ ծանր խոսք է ասում Սահակ Անդրային՝ մեղադրելով թագավորի դեմ ապստամբելու համար<sup>13</sup>.

- Ներիր, որ ես այս խոսքն արտասանում եմ. բայց դու սիրում ես անկեղծությունը:

<sup>10</sup> Գ. Նժդեհ, Բանտային գրառումներ // Երկեր, հատ. առաջին, Եր., «Հարիսիկային գործի գործակալություն», 2002, էջ 268:

<sup>11</sup> Հ. Մաթևոսյան, Տերը, Եր., «Սովետ. գրող», 1983, էջ 239–240:

<sup>12</sup> Ավ. Իսահակյան, Աբու-Լալա Սահարի // Երկեր, Եր., «Սովետ. գրող», 1987, էջ 234:

<sup>13</sup> Մուրացան, Գևորգ Մարգաբետունի // Երկերի ժողովածու հինգ հատորով, հատ. Երրորդ, Եր., «Հայպետհրատ», 1952, էջ 118:

- Այո՛, այո՛, անկեղծ եղիր.իշխանազուն մարդուն անվայել է կեղծավորության գրայակներով ծածկվի, բայց աշխատիր, որ անկեղծության անժոյժ եռանդը մինչև գրպարտության սահմանները չտանե քեզ...

Ակնհայտ է, որ գրուցակիցը դժվարությամբ է զսպում հակածառությունը, և միայն անկեղծության հիշատակումն է նրան հետ պահում բախումից, այդուհանդերձ, ակնհայտ է նաև թաքնված մեղադրանքը: Զրույցի շարունակության մեջ ի հայտ է գալիս հաճախադեալ մի փաստարկ, այն է՝ ուրախ եմ, որ անկեղծ ես խոսում, բայց ակսոս, որ ճիշտ բան չէ ասած:

- Ուրախ եմ, որ կարողանում ես այդպես անկեղծորեն խոսել. Երկշոտ մարդկանց տանել չեմ կարող, բայց միևնույն ժամանակ, տիսրում եմ, որ այդքան անծանոթ ես դու ձշմարտությամբ: Անդարմանելի մի վիշտ է այդ ինձ համար...

Խոսքային անհանդուրժողականությունը լինում է գրուցակիցների տրամադրության, պահի և հանգամանքների թելադրանքի, այլոց ներկայության ազդեցության հետևանքը: Սկրտիչ Արմենի վիպակում մի երիտասարդ՝ Գիսակը, հյուրընկալվել է երեք քույրիկներին և նրանց մայրիկին<sup>14</sup>:

- Թող մազերդ ուղղեմ,— հանկարծ ասաց Գիսակը:— Ես գիտեմ, թե ինչպես պիտի անել, որ ուղղվեն: Իմ մազերն էլ են այդպես:
- Չեմ ուզում:
- Թող ուղղի, ինչո՞ւ ես համարում,— ասաց մայրը:
- Ես զգվում եմ, երբ ինձ ծեռք են տալիս:
- Շատ ես քիչը ցցում, ոգնի, բարկացավ Արփիկը:— Իսկ այդ ինչպե՞ս է, որ ուրիշները քեզանից չեն զգվում:
- Թող զգվեն, ես ոչ ոքի չեմ խնդրում:

Հոգեբանները սա կընութեագրեին որպես «շրջված ագրեսիայի» տեսակ. միգուցե աղջնակը նեղվում է ներկաներից, քույրերի քնծիծաղից, մոր հորդորից և ահա նման պատասխաններ է տալիս, թեև մեկ այլ բան կցանկանար ասել: Նման իրավիճակ է նկարագրում նաև Նար-Դոսը.<sup>15</sup>

Գարեգինը տեղն ու տեղը սառեց, հետո, երբ Սառան վերադարձավ և հոնքերը կիտած նստեց իր տեղը, նա մինչև անգամ վախկութությամբ իր աթօռը մի քիչ հեռու քաշեց:

- Դու վիրավորվեցի՞՞ր,— հարցրեց վարանքով:
- Ես առհասարակ չեմ սիրում, որ ինձ հարցաքննում եմ,— պատասխանեց Սառան խստորեն, առանց նրան նայելու:
- Հետո ես քեզ ե՞րբ հարցաքննեցի,— թոթովեց խեղճ բարեկամս:
- Դուք Սառան առանձնապես շեշտեց այս «դուք»-ը) այս րոպեին հարցրիք՝ կարդացե՞լ եմ ես այն գիրքը: Ասացեք խնդրեմ, ինչո՞ւ չպետք է կարդացած լինեի:
- Գարեգինը բոլորովովին կուչ եկավ:
- Ես ներողություն... Ես չեմ կարծում... Հարցրի այնպես... Որ գիտենայի... Դու իգուր...
- Խնդրեմ ինձ հետ դու-ով չխոսեք,— հանկարծ ընդհատեց նրան Սառան այնպիսի մի եղանակով, որ ինձ թվաց, թե այդ խոսքերի տեղ եթե ապտակ տար, տպավորությունը միևնույնը կլիներ:

<sup>14</sup> Մ. Արմեն, Վարդավան // Երկեր իինգ հատորով, հատ. առաջին, Եր., «Հայաստան», 1966, էջ 577:

<sup>15</sup> Նար-Դոս, Սպանված աղավնին // Երկերի ժողովածու երեք հատորով, հատ. Երկրորդ, Եր., «Հայպետիրատ», 1955, էջ 438:

Եվ վերստին՝ գրքում ծավալվող իրադարձությունները բացահայտում են զրուցակցի այս աստիճանի հարձակողական վերաբերմունքի խորքային պատճառները, տվյալ դեպքում՝ ողբերգական մի էջ երիտասարդ կնոջ անցյալից: Հատկապես ներկա զրույցի նախապատճերյան, նախորդող դեպքերի և հանգամանքների չիմացությունն է հաճախ մեզ հաճար անբացատրելի դարձնում որոշակի իրավիճակում մեր խոսակցի արձագանքը:

Այդուհանդերձ, գաղտնիք չէ, որ կան նաև ինքնին, իրենց **բնավորությամբ** անհանդուրժող, կրվարար մարդիկ՝ պատրաստ չնչին արիթով կամ էլ առանց արիթի բախսելու դիմացինին: Մեջբերում Արասի Այվազյանի՝ «Կովարադներ» պերճախոս անվանված պատմվածքից<sup>16</sup>:

*Մի սովորական կիրակի, ճաշից հետո պապս նստեց, պառկեց, տնքաց, աջ ծռվեց, ձախ ծռվեց, աստամները կրծտացրեց, հետո քրտնած նստեց, կուրծքը քրուց, շշմած աչքերով մեզ նայեց ու ասաց.*

— Ինչի՞ կաշեք վրաս...

Հորենդրայրներս իրար նայեցին.

— Հեք...— ասաց հայրս:

— Ինչըդո հեք... ուրեմն ես աշելու բան չե՞մ:

— Ինչի... Աշելու ես...— կմկմաց Կարապետը:

— Աշելո՞ւ եմ...— աչքերը ոլորեց Պողոս պապս...— աշելո՞ւ եմ... ի՞նչ է, կապիկ եմ, որ աշելու եմ...— Հետո ցույց տվեց ծեռքերը.— Աս մազոլները ծեզի մարդ դարձուցին...— Հետո ցույց տվեց կուրծքը և թրիսկացրեց կրծքին:— Աս չորացած ջանը ծեզի ստեղծեց...

Անհանդուրժող խոսքի առավել հաճախադեպ հիմնավորումներից է «ուժի փաստարկը», այսինքն՝ «Ուժեղի մոտ միշտ էլ թույն է մեղավոր» հիմնավորում-պարտադրանքը. լուսաբանման օրինակ Վահրամ Ալազանից<sup>17</sup>: Վերջինս բանտում իր ծխած գլանակների մնացորդները լուցկու տուփի մեջ է հավաքելիս լինում «սև օրվա» համար: Խուզարկությամբ բանտապահները հայտնաբերում են:

— Ձե՞րն է այս տուփիր,— հարցրեց բանտապետը:

— Այո,— պատասխանեցի ես:

— Ինչի՞ համար եք հավաքել ծխախոտի այս մնացորդը:

— Ծխելու համար:

— Ստում եք, հավաքել եք, որ լցնեք հսկիչի աչքերի մեջ և փախչեք:

— Քաղաքացի պետ,— ցույց տալով փթանոց կոշիկներս ասացի ես,— մի՞թե հնարավոր է այս կոշիկներով փախչել, ես հազիվ եմ սրանցով շարժվում, ինչ խոսք կարող է լինել փախուստի մասին:

— Լոել,— գոռաց բանտապետը՝ ծեռքը սեղանին խփելով,— տասը սուտկա կարտուսեր զցել:

Ուժեղի մոտ թույն է մեղավոր, քանի դեռ որևէ հիմքով (իշխանական, դերային, գույքային, տարիքային) դիմացինի հանդեպ գերազանցություն ունեցող ուժեղի համար ամենապարզ ու հասկանալի ճշմարտությունն իսկ փաստարկային արժեք չունի: Հայ գրողների համար մերժելի է սեփական ժողովրդի հանդեպ իշխանական անհանդուրժողականությունը: «Աշուտ Երկար» պատմավեպում հայրենասեր հոգևորականի՝ Մարտիրոս վանահոր շուրբե-

<sup>16</sup> Ա. Այվազյան, Կովարադներ // Ընտիր Երկեր (Վիպակներ, պատմվածքներ), Եր., «Սովետ. գրող», 1987, էջ 352:

<sup>17</sup> Վ. Ալազան, Տառապանքի ուղիներով (Հուշեր), Եր., «Խորհրդ. գրող», 1990, էջ 88:

որից է ժողովրդի մեղադրանքը հնչեցվում Գագիկ Արծրունու և տիրադավ իշխանների հասցեին<sup>18</sup>.

— Այո՛, ժողովուրդը, հայ ժողովուրդը, որին տրորում, տանջում են իշխանները և նրանց ուսկորների վրա կանգնում իրենց փառքը՝ բուռն կերպով պատասխանեց Սարտիրոս Հայրը:— Այդ ժողովրդի աղեխարշ ծայնը երկինք է հասնում, իսկ դուք՝ հայ իշխաններ, ձեր անձնական կրթերը առաջ տանելու համար ներքին երկառակություն եք հարուցում, եղբայրասպան կրիվներ սարքում... Ես աղոթել եմ ու կաղոթեմ իմ ժողովրդի համար, որին դու այստեղ արհամարհում և հեզնում ես, տեր արքա: Բայց լավ իմացիր, որ ձեր ուժը, ձեր փառքը այդ ժողովրդի վրա է հիմնված: Չինի այդ ժողովուրդը՝ ձեր փառքն էլ կանցնի, կանհետանա ինչպես մի երազ: Այդ ժողովուրդը, որին դուք ուսնաւակ եք տալիս, այսօր քնած է ու թմրած, բայց վաղը կզարթնի, կշարժվի, և այն ժամանակ վայ իշխաններին, վայ հղորին... Օ՛, վայ է, երբ թմրած գազանն է զարթնում, ուշքի զալիս և ոսոխին առաջը տեսնում:

Սեփական գերադաս դիրքից ստորադասների հանդեպ անհանդուրժող վարմունքը երբեմն արժանանում է ավելի հմուտ զրուցակցի հզոր հակահարվածին: Դիտարկենք Լևոն Շանթից մի օրինակ<sup>19</sup>: Իշխանուիի Աննայի ամուսնում և զավակներին սպանել է Քեսունի իշխանը (Մեծ իշխանը), նրան բանի տիրացել (Աննան, այդ հմայիչ և խելացի կինը ինքնասպան չեղավ միայն մեկ նպատակով՝ վրեժխնդիր լինել զավակների սպանության համար): Իշխանի տիկինը Սոֆիան է (Մեծ իշխանուիին), որի շքախմբում հարկադրյալ հայտնվել է Աննան:

- ՍՈՖԻԱ- Իշխանուիի՝ Աննա, ես քանի՞ անգամ ըսեր եմ քեզի, որ կոտրած շերեփի պես, ամեն խոսքի մեջ չի մտնես, ամենքի խոսքի մեջ չինաս:
- ԱՆՆԱ- Կարծեմ, Մեծ իշխանուիի, քեզի ոչինչ չըսի՝ ես:
- ՍՈՓԻԱ- Հազար անգամ ըսեր եմ քեզի՝ պատասխանե՛ երբ քեզի հարց տան: Եվ ընրիանրապես, երբ ես ներկա եմ՝ դուն շատ խոսելու պետք չունիս: Անվայել բան է: Եվ մանավանդ Մեծ իշխանի հետ:
- ԱՆՆԱ- Քեզի հետ, Մեծ իշխանուիի, կարգադրե՛ ինչպես կուզես: Կուզես՝ ամենկին չխոսիմ: Բայց ուրիշներու հետ, Մեծ իշխանուիի, լեզվիս տերը ես եմ: Եվ մանավանդ Մեծ իշխանի հետ:
- ՍՈՓԻԱ- Սվոր լեզուն նայեցեք, ավելի երկար մազերուն հյուսքեն: Բայց ալ չափը անցմիլ սկսար: Ես մինչև հիմա ներեր եմ քեզի, աչք եմ գոցեր, ըսեր եմ՝ տգետ է, անկիրը է, անվարժ ու դժբախտ: Բայց դուն ալ պետք է գնահատել գիտնաս իմ բարությունս: Եթե եկած ես ինձի ծառայելու՝ եղիր ինչպես մեծ տիկնոց մը ծառայողին կվայելե: Թե չէ՝ գիտցիր, կնետեն նորեն քեզի փողոցը, ուրկե քեզի բերեր են:
- ԱՆՆԱ- Մի՛ տար սպառնալիքներ, որ գործադրել չես կրնար: Իզուր ծիծաղելի կրտառնաս, չէ՞:

Դիպուկ պատասխան է, հզոր հակահարված և նրին ակնարկություն (Մեծ իշխանը սկսել էր առավել հարգել Աննային): Այստեղ է հիշվում «Հազար ճնճղուկին՝ մի քար, հազար խոսքին՝ մի խոսք» ասացվածքը: Իսկ ի՞նչն էր Սոֆիային այդպես անհանդուրժող և հարձակողական դարձուլ: Դա հե-

<sup>18</sup> Բ.Այվազյանց, Աշոտ Երկար, Անիի կործանումը, Եր., «Հայպետիրատ», 1964, էջ 112:

<sup>19</sup> Լ. Շանթ, հնկած բերդի իշխանուիին // Երկեր, Եր., «Սովետ. գրող», 1989, էջ 653:

տեանքն էր նախորդ խոսակցության, երբ Մեծ իշխանը, պատերազմից տուն դառնալով, խմբված կանաց հարցնում է՝ անհանգի՞ստ են եղել արդյոք, Սոֆիան հաստատական է պատասխանում, թե՝ իհարկե, պատերազմ է, վտանգով լի, թշնամին՝ անթիվ։ Իսկ ահա Աննան ասում է. «Ոչ, իշխան, անհանգիստ չէինք մենք։ Երբ մեր գնդերուն դուն կառաջնորդես՝ հոս ոչ մեկ կին պատճառ չունի անհանգիստ ըլլալու»։ Սա, անտարակույս, ավելի տեղին պատասխան է՝ տիրամեծար, տղամարդու և զորավարի ինքնասիրությունը շոյոդ. Սոֆիան դա գիտակցում է, անզապորեն խրատում Աննային։ Շարունակությունը ևս պերճախոս է։ Սոֆիան, ներքուստ գիտակցելով պարտությունը, մեղքը գցում է Մեծ իշխանի վրա, թե՝ «շատ երես կրութա»։ Բայց Սոֆիայի մորեթքայրն ամեն ինչ ստույգ և պատկերավոր բացատրում է.<sup>20</sup>

- ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Այ, իմ սիրելի՝ քեռաղջիկս, հանցանքը անոնցը չէ. հանցանքը հոն է, որ ես ու դուն շատ գեշ նշան բռնող ենք։
- ՍՈՖԻԱ— Դո՞ւն ինչ կըսես։
- ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Արձակածդ նետը չորհպավ։ Այ, այն կինը զարկավ ճիշտ մեջտեղը։ Ժամանակին ու իր տեղին։ Ա՛, մե՞ծ արվեստ է նշան բռնելը, միշտ։ Խոսքով զարնելը ամենեն առաջ, որ դժբախտաբար մեր ընտանիքին մեջը չկա։ Դուն ալ, ես ալ, ծուռ կզարնենք։ Մենք, սիրելիս, վրիպակներ ենք, վրիպածներ։
- ՍՈՖԻԱ— Է՛, վերջ տուր հիմար խոսքերուդ։
- ԱՆԴՐՈՆԻԿՈՍ— Մեծ սիրով մինչև անգամ այդ սիրուն խորհուրդը կուտամ նոյմիսկ քեզի։ Որովհետև մինչև հիմա ինչ որ ըսիր, ճիշտն այն է, ինչ որ պետք չէ ըսեիր։ Պետք է ըսեիր ուրիշ բաներ, որ դուն չըսիր։

Այս տիկնանց միջև փոխադարձ անհանդուրժողականության պատճառը միևնուն անձի՝ Մեծ Իշխանի համակրանքին արժանանալու համար խուլ մրցակցությունն է։ Ահա և միջանձնային անհանդուրժողության տարբեր դրսուրումներում հնարավոր է արձանագրել որոշ չափով քողարկված մրցակցություն՝ հանուն պաշտոնի, առաջխաղացման, դիրքի, համարումի, իշխանական ազդեցության և այլն։

Ինչպես հանդուրժող, այնպես էլ անհանդուրժող խոսքի պարագայում շատ է գործածվում «հեղինակության փաստարկը»։ Սրա հիմքում ընկած է խոսողի և նրա անձի միջև կապը, որը, հանգամանքների բերումով, կարծրատիպ է դառնում և միջանձնային ընկալման մեջ որոշակի դեր խաղում։ Այդ մասին է Հակոբ Պարոնյանի դիտարկումը. «Շատ անգամ ոչինչ խոսք մը նշանավոր մեկու մը բերնեն ելած ըլլալուն համար իբրև պատգամ կ'ընդունվի, և շատ անգամ նշանավոր խոսք մը աննշան մեկե մը ըսված ըլլալուն համար կարևորություն չառներ»<sup>21</sup>։ Ահա և հաճախ կոյմերը (անձինք, խմբերը, կուսակցությունները) բախվում են, քանի որ նրանք ընդունում են հակադիր հեղինակությունների և պատրաստ չեն զիջումի։ Օրինակ՝ Միքայել Նալբանդյանից.<sup>22</sup>

**Պ.Խ. Ակսեց յուր խոսակցությունը իմ հետ այսպես.**

- Կարդացե՞լ ես «Հայաստանի Մեղուի» 16-րդ համարը։

<sup>20</sup> Անդ, էջ 654։

<sup>21</sup> Հ. Պարոնյան, Լրագրական դիցարանության ապիսը // Երկերի ժողովածու տասը հատորով, հատ. ութերորդ, Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 143։

<sup>22</sup> Մ. Նալբանդյան, Հայաստակարան // Երկեր, Եր. «Սովետ. գրող», 1985, էջ 223։

- Զէմ կարդացել,— պատասխանեցի ես,— որովհետև չեմ ստանում:
- Ավատու, որ չես կարդացել. նորա հրատարակողը, Մանդինյանց Ստեփանոս քահանան, այնպես տղամարդի պես հանդես է եկել և խայտառակում է Նազարյանցին և Նալբանդյանցին, որ ասել չէ կարելի: Հավատա ինձ, այն օրն է ծգել նորանց, որ կարծեմ թե այդ երկուքը ևս գղջացած լինին յուրյանց գրածների վրա, մանավանդ այսպիսի հզոր և գիտնական հակառակորդի պատահելով:
- Ես իիմարութենների կարդացող չեմ և ժամանակ չունիմ ևս ուշադիր լինելու տգեստ մարդերի ցնորամիտ վայրախտության, և չեմ կարծում, որ Նազարյանցը և Նալբանդյանցը գղջացած լինեին յուրյանց մինչև այժմ գրածների վերա, ինչպես դու ասում ես՝ «հանդիպելով մի այդպիսի հզոր և գիտնական հակառակորդի»: Ձեր աչքումը, ճշմարիտ, գուցե մի անկիրը և բյուր տեսակ նախապաշտոմունքով լցված մարդ ունի մի հարգ ու արժանավորություն, և գուցե կարող էիք դուք այդպիսի մի մարդ գիտնական անվանել:

Ինքնին հասկանալի է, որ կանխակալ տրամադրվածները չեն կարող մեեն համաձայնության գալ, սակայն դրա հնարավորությունը չի կարելի բացառել: Եթե կողմերը վերանան աչառու վերաբերմունքից և փորձեն չեզոք քննարկել տարածայնությունների բովանդակային կողմը, ապա միշտ էլ հնարավոր է, թեկուզ փոքրիկ քայլերով, շարժվել դեպի իրարամերժ հեղինակությունների միջև ընդհանրության որոնում, ըստ այդմ՝ նաև փոխադարձ հանդուժողություն: Դե, իսկ եթե որևէ կողմի համար հեղինակությունը վերածվել է կուռքի, ապա, թերևս, անհնաստ է շարունակելը, և միանգամայն տեղին է հեղինակի եզրակացությունը. «Եվ ավելորդ է պատասխան տալ այնտեղ, ուր խոսում են հեղինակության անունով, որ մեք չենք ընդունում»<sup>23</sup>.

Դիմացինի ասածը երբեմն մեզ համար համոզիչ չէ, քանի որ խախտված է լինում փաստարկման մեջ տրամաբանականի և հուզականի ներդաշնակությունը: Դրա արձանագրումն արդեն գրուցակցի ձեռքին դաշնում է հակափատարկ՝ մերժելու այս կամ այն առաջարկությունը, և անհամաձայնությունն էլ ավելի համոզիչ է ընկալվում<sup>24</sup>.

- Քարեկամ,— ասաց իրավաբան Փեյքարյանը,— ձեր ասածները գեղեցիկ են, բայց միայն գեղեցիկ— ուրիշ ոչինչ: Իմ խելքս էլ նոյնն է թելադրում, բայց այլ բան է խելքի թելադրածը, այլ բան է զգացմունքների պահանջը:

Սեփական ասելիքը համոզիչ դարձնելու լավ հնարք է փաստարկի հակադարձումը, եթե դիմացինի որևէ փաստարկ շրջում ենք իր դեմ: Համոզվենք վահան Թոթովենցից մի օրինակով<sup>25</sup>: Փոքրիկ թորիկը որբացել է, մորաքույրն է տիրություն անում և ահա ամուսնուն հորդորում է երեխային (որն ուսման հանդեպ սեր և ընդունակություն չի դրսելուում) դպրոցից չհանել.

Թուրքանտա Թորոն համառորեն պնդեց, որ Թորիկը դպրոցը պետք է շարունակի:

- Խելքին բան չի պառկիր,— թերևսակի առարկեց Փալանձի Գիրգորը:

<sup>23</sup> Ա. Նալբանդյան, Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ // Երկեր, Եր., «Սովետ. գրող», 1985, էջ 520:

<sup>24</sup> Ա. Շիրվանջանե, Քառու // Երկերի ժողովածու տասը հատորով, հատ. Երրորդ, Եր., «Հայպետհրատ», 1959, էջ 203:

<sup>25</sup> Վ. Թոթովենց, Բաց կապույտ ծաղիկներ // Երկեր Երեք գրքով, գ. առաջին, Եր., «Սովետ. գրող», 1988, էջ 213:

- Օր մը կպարկի, – հակածառեց Քուրվանտա Քորոն:
- Գրել-կարդալ որ չի սորվավ, բսել է էշ է, մարդ չի դառնար, – պնդեց Փալանձի Գիրգորը:
- Քուրվանտա Քորոն թեթև ծիծաղեց և ասաց.
- Դուն ըլ կարդալ գրել չես գիտեր, դո՞ւն ըլ էշ ես, քա:
- Փալանձի Գիրգորը լռեց:

Հակադարձվող փաստարկը հաջող է գործածվում խոսքային հաղորդակցման այն վիճակներում, երբ հարկավոր է լինում վերջ տալ դիմացինի անհիմն խրատաբանությանը: Հրաշալի է նկատում Պարույր Սևակը<sup>26</sup>. «Այս, ինչպես է, որ չի հոգնում Նրա անփակ այս բերանը... / Նա ուրիշի շուղն է տեսնում՝ Մոռանալով իր գերանը... Ուրիշներին դեռ մածունից/ Ու պանրից է քարոզ կարդում՝ Առօանալով, որ այլկըս/ Չի՞ մակարդում իր մերանը:

Ակնարկությամբ սկսվող հանդիմանանքը նույնպես երթեմն հակադարձվում է՝ համարժեք ակնարկությամբ: Ստորև օրինակում հակադարձումն ուժեղացել է ասացվածքի գործածմամբ<sup>27</sup>:

- Հետաքրքրական մարդ եք դուք, մայոր, – ասաց Արշակյանը, – չեք ուզում ծեր դեմքի վրա երևա այն, ինչ որ կա կրծքի տակ: Ականջն ուրիշի սրտին եք դնում, գուցե ծե՞րը սսուգելու համար:
- Մայորը ուշադիր նայեց Արշակյամին.
- Դուք էլ հոգեբանական անալիզներ սկսեցիք: Քինախնդիր մարդ եք երևում, ավագ քաղդեկ:
- Ինչ որ ցանում, այն էլ հնծում են:

Հակադարձվող է նաև հիմնարար փաստարկումը, երբ գրուցակիցն իր հասցեին հնչած որևէ մեղադրանք անմիջապես կասեցնում է՝ ցույց տալով դրա սխալ հիմքը, այսինքն՝ այն փաստական սխալը, որից բխեցվում է մեղադրանքը: Դասական է Կարդան Այգեկցու առակը<sup>28</sup>: Մի կաղլիկ գինվոր պատերազմ է գնում, մի այլ գինվոր ծաղրում է, թե՝ ո՞ւր ես գնում, ով ողորմելի, թեզ իսկույն կսպանեն, որովհետև փախչել չես կարողանա: Եվ կաղլիկը մի չքնաղ պատասխան է տալիս. «Ո՞վ անմիտ, ես չեմ գնում պատերազմ՝ փախչելու, այլ կանգնելու, կրվելու և հաղթելու»: Չատ տպավորիչ է՝ հզոր հակաֆաստարկ: Չէ՞ որ ծաղրասեր գինվորի մտքինն այն է, որ փախչելիս կաղն առաջիններից մեկը կզրիվի. սա անվիճելի է: Ինաստուն գինվորը բացահայտում է գրուցակի դատողության հիմնարար սխալը. պատերազմը իր համար ոչ թե փախեփախն է, այլ թշնամու դեմ կանգնելը և հաղթելը: Որևէ այլ պատասխան այսքան ազդեցիկ չէր լինի:

Անհանդուրժելի խոսքային վարքագիծը երթեմն ցինիզմի հետևանք է: Սա դիմացինի կարծիքների, դավանած գաղափարների և արժեքների հանդեպ բացահայտ արհամարհանքն է: Առօրյա կյանքում մարդիկ խուսափում են ցինիկությունից. կան քաղաքավարական լեզվակաղապարներ, մեղմաստյաններ: Սակայն քաղաքական պայքարում, հեռուստաբանավեճերում, իշխանավորների խոսքում ոչ միշտ են դրանք գործածվում: Աններելի է ցինիզմը, երբ հանդես է գալիս առանց դիմակի՝ որպես գրեհիկ, սանձարձակ

<sup>26</sup> Պ. Սևակ, Ությակներ // Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. առաջին, Եր., «Հայաստան», 1972, էջ 262:

<sup>27</sup> Հ. Քոչար, Մեծ տան զավակները // Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. Երրորդ, Եր., «Հայաստան», 1966, էջ 37–38:

<sup>28</sup> Վ. Այգեկցի, Ինաստուն գինվորը // Առակներ, Եր., «Հայպետհրատ», 1951, էջ 87:

Ճշմարտախոսություն: Անսքող ցինիզմին դժվար է դիմանալ, հանդուրժել, և գրուցակիցները միշտ էլ որևէ կերպ արձագանքում են: Մկրտիչ Պեշիկ-թաշյանի հերոսը՝ իշխանության մոլուցքով հափշտակված տիրոջ հավատարիմ ծառան ևս չի դիմանում՝ արձագանքում է ակամա ծաղրով.<sup>29</sup>

**ԶԱՎԵՆ – Ուրեմն՝ ի՞նչ է հիմա քու միտքը:**

**ԿՈՂՈՍԱԿ – Իմ միտքս Ներսեսը թշվառության վիհն հատակը գլորելն է:**

**ԶԱՎԵՆ. – Ետքը՝ ...:**

**ԿՈՂՈՍԱԿ – Ետքը՝ ետքը անոր թշվառությամբը զվարձանալն է, և կամ, եթե հաճոյքս այնպես պահանջե, անոր արյունը խմելն է:**

**ԶԱՎԵՆ – Ո՞վ արժանի ըմպելիք բռնավորաց:**

Հայ գրողների արձանագրնամբ՝ ամենամոտիկ ընկերներն իսկ կարող են գտնվել միմյանց խոսքի մեջ անհանդուրժելի ցինիզմի հետևանքով: Օրինակ՝ «Նա զգում էր, որ ընկերուիհու մասամբ անհոգ, մասամբ հեզնական, մասամբ ցինիկական և ընդհանրապես բավական անձնապաստան տոնը հետզհետե զրգուում է իրեն այն աստիճան, որ նրա սանձարձակ-ծաղրական լեզուն նողկանքի պես մի բան է ազդում իրեն»<sup>30</sup>:

Ցինիկ խոսելակերպի հիմքում լինում է որևէ իմաստակություն, որի քողազերծումը կարևոր է թե՛ ճշմարտությունը բացահայտելու, թե՛ անհանդուրժող խոսքին համարժեք պատասխան տալու համար: **Իմաստակությունը** (սովետական խոսքային հաղորդակցման հնագույն ուղեկիցներից է՝ կանխավ հայտնի սխալ դատողության մատուցումը որպես ճշմարտություն: Որքան հարուստ են իմաստակի հնարքները (բառախաղ, տրամարանության օրենքների խախտում, արագախոսություն, հարցախեղող և այլն) նույնքան է՝ դրանց վնասազերծման միջոցները: Տպավորիչ է իմաստակության հիմքում ընկած դատողությունը ծայրահեղության հասցնելու երգիծական միջոցը: Օրինակը Երվանդ Օսյանի «Ընկեր Բ. Փանջունի» վեպից է, եթե չարաղետ կուսակցական գործիչ ընկ. Սարսափունին «հերքում է» արդարացի հակածառությունը<sup>31</sup>: «Հեղափոխականների» հրահրած գործադուլի տասներորդ օրը ջուկակագործ բանվորուիհիները դժգոհում են.

- **Բայց անորի կը մեռմենք այսպես, — կըսեին բանվորուիհիները:**
- **Թեկուզ անորի մեռնիք՝ պետք է դիմադրել. — վճռեց ընկեր Սարսափունին. — միմչեւ որ այսօր անորի չմեռնիք՝ չեք կրնար վաղը լավ կշտանալ:**

Եթե ցինիզմը բացահայտ անհանդուրժողականություն է, ապա **միակողմանի մոտեցմանը** փաստարկումը հիմնականում մոլորության հետևանք է. սեփական դիրքորոշումը գերազույն ճշմարտություն ընկալելն է հարուցում խոսքային ազրեսիվություն:<sup>32</sup> «Ինչ որ ես ասացի, ունի գիտական հիմ, և հարկ է զայն ընդունիլ ամստրունչը»: Սա պարտադրանքի ուժով չի տարբերվում «ուժի փաստարկից», սուկ գիտական հիմնավորվածության պատրանք ունի: Ահա թե ինչու այս փաստարկները սովորաբար զուգորդվում են կուսակցական անհանդուրժողականության դրսադրումների մեջ, երբ իշխող քաղաքական ուժը, իր կամքը պարտադրելով հասարակության մյուս անդամներին և

<sup>29</sup> Ս. Պեշիկթաշյան, Կոռնակ // ԵԼԺ, Եր., ՀՍՍՀ ԳԱ իրատ., 1987, էջ 163:

<sup>30</sup> Նար-Դոս, Պայքար // Երկերի ժողովածու Երեք հատորով, հատ. Երրորդ, Եր., «Հայպետհրատ», 1955, էջ 24:

<sup>31</sup> Ե. Օսյան, Ընկեր Բ. Փանջունի, Եր., «Հայաստան», 1989, էջ 155–156:

<sup>32</sup> Անդ, էջ 231:

քաղաքական ընդդիմությանը, փորձում է գործադրել գիտական բնույթի հիմնավորումներ՝ վիճակագրական տվյալներ, սոցիոլոգիական հարցումներ, իշխանությանը հավատարիմ փորձագետների կարծիքներ և այլն: Միակողմանի դիրքորոշման հիմքում ընկած է մոլության հասնող մեծամտությունը՝ սեփական տեսակետի (կարծիքի, իմացության, աշխարհայացքի, ծրագրի, կուսակցության) արժեքի անքննադատ գերազնահատումը, միաժամանակ՝ ծայրահեղ անհանդուրժողությունը այլ տեսակետի հանդեպ: Կուսակցամոլի ամեն մի հայտարարություն անհանդուրժողության ցցուն կարգախոս է:<sup>33</sup> «Մենք օրենք ենք, և մեզմէ դրւու ամեն իմչ ապօրեն է»: «Չիք ուղղություն և շշմարտություն արտաքր մեր կուսակցության»:

Հանրային կյանքի բնականոն կարգավորման մեջ որքան կարևոր է վատ արարքը, հորի ապրելակերպը, անհանդուրժելի խոսելակերպը դատապարտելը, այդ թվում՝ գեղարվեստի միջոցներով, նույնքան կարևոր է դրվասելի արարքի, պարկեշտ ապրելակերպի, առինքնող խոսքի մատուցումը: Հայ գրականության մեջ կան նման ընդորինակելի կերպարներ.

- «Գնունին հայտնի էր ուսանողներին իր խիզախ մտքերով: Նա խոսում էր անկեղծ բոլորովին և բացարձակ: Նա միշտ պաշտպան էր կանգնում երիտասարդ ճարտարապետներին: Դրա համար էլ նրանք սիրում էին նրան և ամեն անգամ նրան էին դիմում: Նրա հետ խոսելը հաճույք էր: Նա չէր կոտրում ոչ մի տրամադրություն: Չէր սովորեցնում և ոչ մի մեծամիտ բան: Եվ զարմանալի էր. նա միշտ քննադատում էր՝ առանց հուսահատեցնելու անգամ անշնորհը մարդուն»<sup>34</sup>:
- «Գիտեր ամենքին հարմարվելու և ամենքի հետ խոսելու ձևը և խոսակցին գրավելու կախարդական մի ուժ ուներ»<sup>35</sup>:
- «Կարոն խիստ հանդարտ և ծանր եղանակով կարդաց մի փոքրիկ ձառ: Բայց նրա խոսքերը, որոնք այնպես ազդու և զորեղ կերպով դուրս էին հոսում, մինչև այն աստիճան ներգործեցին իմ վրա, որ ես մինչև այսօր չեմ մոռացել, թեև այն օրից անցել է հիսուն տարի, այո՛, հիսուն տարի, դա քիչ չէ...»<sup>36</sup>:

Ոչ միայն գրականության մեջ, այլև իրական կյանքում քիչ մարդիկ չկան, որոնցից, իսկապես, կարող ենք սովորել ազդեցիկ և համոզիչ խոսքի արվեստը: Ճարտասանական մշակույթի որոշակի մակարդակը պարտադիր է ամեն մեկին համար՝ սեփական ասելիքը հստակ ձևակերպելու և գրուցակցին մատուցելու, ինչպես նաև մեզ ասվածը համարժեք հասկանալու՝ այդկերպ առնվազն թյուրիմացություններից խուսափելու, առավելագույնը՝ փոխադարձաբար ընդունելի խոսքային հաղորդակցում ապահովելու համար:

Ղիմացինի խոսքը հանդուրժողաբար ընկալելու հիմնապայմանը զորւցակիցների՝ միմյանց համբերատար ունկնդրելու, անհարկի չընդհատելու կարողությունն է: Ամեն ոք առօրյա խոսքուղղույցից արդեն դյուրին կարող է համոզվել, թե որքան վատ ենք իրար լսում, և հենց այդ պատճառով որքան հաճախ են առաջանում զանազան թյուրըմբռնումներ: Միմյանց հաճախակի և անպատճե ընդհատելու խոտելի սովորությունը հատկապես վնասակար է

<sup>33</sup> Անդ, էջ 134, 247:

<sup>34</sup> Դ. Ղեմիրյան, Նոր մոնումենտալ // Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. յոթերորդ (լրացնցիչ), Եր., «Հայպետիրատ», 1960, էջ 122:

<sup>35</sup> Նար-Շոս, Պայքար, էջ 54:

<sup>36</sup> Ռաֆֆի, Կայժեր // Երկերի ժողովածու տասը հատորով, հատ. չորրորդ, Եր., «Հայպետիրատ», 1956, էջ 335:

գրուցակիցների միջև «գերադասություն – ստորադասություն» փոխհարաբերությունների պայմաններում: Այնպես որ, եթե ղեկավար – ենթակա գույգի գրուցը տեղեկատվական բնույթի խոտորումներ է ունենում, ապա դա, ամենայն հավանականությամբ, գերադաս անդամի մեղքն է: Պատահական չէ, որ հայ գրականության մեջ գրուցակցին ուշադիր ունկնդրելու խորհուրդը հատկապես իշխանավորներին է ուղղված: «Տիգրան Մեծ» վեճում արքայամայրն է այդ ոգով հորդորում որդուն.<sup>37</sup>

— Դու ընդհատում ես, զավակս, և չես լսում մինչև վերջ: Գիտցիր, որ քազակիր այրերի թույլ կողմն է դա: Սլվորիր, Տիգրան, որինացինին ունկնդրել համբերությամբ և նոր միայն վճիռներ արձակել: Հաճախ մարդը ճակատագրական սիսալ է կատարում այն ժամանակ, երբ չի կարողանում ստիպել իրեն՝ մինչև վերջ լսելու խոսակցին: Ես գիտեմ, որ դու բոլորից շատ ատում ես շատախոսությունը և սիրում ամեն ինչի մասին լսել ու պատմել լակոնացու պես: Բայց աստվածները բոլորին չեն ընծայել դեպքերի մարգարիտները վիպելու շնորհքը: Երբեմն գրուցակցի նոտ այդ մարգարիտը երևում է շատախոսության վերջաբանում:

Եթե ոչ լիովին հանդուրժելի, սակայն գոնե ոչ անհանդուրժելի խոսք ապահովելու գլխավոր պայմանը, ամենից առաջ, զգուշավոր խոսելակերպն է: «Զգուշավոր» բնութագրիչը կարող է, իհարկե, շատ բան նշանակել՝ բառերի ընտրություն, դիմելածն, հնչերանգ, գրուցակցի արձագանքի ձկուն ընկալում, նրան ունկնդրելու պատրաստակամության ցուցադրում և այլն: Հայ գրականության մեջ զգուշավորության ուշագրավ բազում ծևակերպումներ կան:

Միջանձնային փոխհարաբերություններում խրատատվությունը, թերևս, ամենատարածված երևույթներից է: Եվ հաճախ էլ խրատի հասցեատերը անհանդուրժող կեցվածք է ընդունում, զայրանուն, երբեմն՝ շրջում խրատը ընդդեմ խրատատուի:

Ըստ Նահապետ Քուչակի<sup>38</sup> «Զիրատ այն մարդուն դուն տուր, զինչ խրատ որ տաս՝ նա լսե, / Անգետ անիմաց մարդուն շատ ասելն, ա՞մ, ի՞նչ օգուտ է, / Խելոքին խրատ երբ տաս, բարեկամ քեզ կու դիտե, / Անգետին խրատ երբ տաս, նա չարկամ գքեզ ճանաչե»:

Խոսքը հանդուրժելի դարձնելու համար հարկավոր է երկկողմանի տրամադրվածություն: Մի կողմը մյուսին պետք է հորդորի գրուցը շարունակել՝ հատկապես երբ գրուցակիցը ինչ-ինչ պատճառներով չի կողմնորոշվում ինչպես վարվել: Չէ՞ որ խոսքի հանդուրժելի կամ անհանդուրժելի լինելը, վերջիվերջը, պայմանավորված է կողմնակիցների արձագանքի տեսակով: Գրականության մեջ բազում օրինակներ կան, թե ինչպես է հարկ լինում քաջալերել դիմացինին, մղել ամսեղծ երկխոսության՝ նաև սեփական խոսելակերպով:

Խոսքի կարևոր հատկություններից է տևաղությունը. Վերջինս ինքնին չի կարող պայմանավորել որոշակի խոսքի բովանդակությունն ու բնույթը. Ինչպես հանդուրժող, այնպես էլ անհանդուրժող խոսքը կարող են լինել թե՛ հակիրծության կարևորությունը: Եվ իրոք, ամեն ինչից զատ, շատախոսու-

<sup>37</sup> Հ. Խաչատրյան, Տիգրան Մեծ, Եր., «Հայաստան», 1972, էջ 39:

<sup>38</sup> Ն. Քուչակ, Հայրենի կարգավ, Եր., «Հայպետիրատ», 1957, էջ 263:

թյունը, երկարաբանությունը, անհարկի ձգձգումները հանգեցնում են այն բանին, որ նախապես միանգամայն հանդուրժելի խոսքը սկսում է ընկալվել դժկանությամբ և տիհածությամբ:

Հայ գրականության դասերից մեկն այն է, որ հանդուրժող խոսքը ոչ միայն հնարավոր է, այլև պարտադիր է՝ որպես մարդկանց բնականոն համակեցության և հատկապես միջանձնային խոսքային հաղորդակցման պարտադիր բաղադրիչ:

### **Բանավեճ, վիճաբանություն, վեճ**

Մարդկանց խոսքային հաղորդակցման մեջ առանձնացնենք երեք փուլ՝ բանավեճ, վիճաբանություն և վեճ: «**Բանավեճը**» որևէ հարցի վերաբերյալ կողմերի դատողությունների համադրումն է տրամաբանության շրջանակներում, գիտականության չափանիշներով, իմաստակության բացառնամբ, այլ կերպ ասած՝ «բանավեճը» վեճ է «բանին»՝ լոգոսին ենթարկվելով: «**Վիճաբանություն**» բարի մեջ «վեճը» դարձել է գերադաս, «բանը» (լոգոս-տրամաբանությունը՝ ստորադաս)՝ ստորադաս. կողմերն աստիճանաբար հեռանում են «բանից», մոռանում, շեղվում, տեղապտույտ տալիս, ապա սկսում միջյանց մեղադրել գոյացած փակուղու համար: Վիճաբանությունը շարունակման երկու ուղի ունի. Եթե կողմերը զգաստանում են, բարի կամք դրսենում, ձգտում համատեղ քննարկման, ապա հնարավոր է վերադարձ բանավեճին: Ցավոք, սա հաճախադեպ չէ. զրուցակիցները բորբոքվում են, անձնական բնույթի մեղադրանքները խանգարում են ներողանմտություն և հանդուրժողականություն դրսենութելու, այլոց ներկայությունն էլ, որպես կանոն, բացասաբար է անդրադարձում: Այնպես որ՝ վիճաբանությունը ստվորաբար վերածվում է վեճի: «**Վեճը**» արդեն ոչ մի ընդհանրություն չունի տրամաբանության հետ («բանը» արտաքսվել է բարից). սա անձնական վիրավորանքների փոխադարձ տարափ է, անցյալի տիհած հիշողությունների թարմացում:

Հայ գրականության մեջ բանավեճի օրինակները քիչ են. ավելի շատ են վիճաբանությունները և հաջորդող վեճերը: Հովհ. Թումանյանը խորունկ դատողություններ ունի գրականության և գրական քննադատության կապի մասին, մասնավորապես՝ «գրականությունը զարգացնելու ուժեղ միջոցներից մինը անողոք ու անաչար քննադատությունն է»<sup>39</sup>: Այս տեսակետից ահա քննադատության թումանյանական ծևակերպումը կարող ենք դիտարկել որպես բանավեճի մի տեսակի ամփոփ սահմանում. «Գրական ստեղծագործության քննադատությունն ի՞նչ է որ. հանգիստ ու խոր սուզումն գրական գործի մեջ, օբյեկտիվ ու աննախապաշար վերաբերմունք, պայծառ ու թափանցիկ հայացք, որ ինչքան էլ սխալներ տեսնի ու հաշվի, միշտ էլ որոնում է կենսունակն ու ապրողը, որովհետև էլ է նորա վերջնական նպատակը»<sup>40</sup>:

Որպես բանավեճի օրինակ բերենք **Միքայել Նալբանդյանի** երևակայական քննարկումը վաճառականության հանրային դերի և բարոյական հիմքերի վերաբերյալ:<sup>41</sup>

- **Միքայել Վաճառականություն ասացյալը** դրականապես մի պիղծ բան է, որ անպատճառ պիտո է հիմնված լիներ սատանայական կանոնների վրայ. ոչ, ոչ, վաճառականությունը սուրբ բան է, պիտո է արդարու-

<sup>39</sup> Հ. Թումանյան, Անտեղի ու անպետք միջոց, էջ 27:

<sup>40</sup> Անդ, էջ 26:

<sup>41</sup> Մ. Նալբանդյան, Հիշատակարան, էջ 227–228:

թյամբ և խղճմտանքով գործակատար լինել և այդ հանդիսում: Ինչ որ աստված ստեղծել է, ամենայն ինչ բարի է, և պիտո է զգուշանալ, չմեղանչել արդարության ընդդեմ և չպահպան մի գործի սրբությունը:

- Դու կարծում ես թե աշխարհի երեսին հարստականքը արդարության մարել են յուրյանց արծաթի կարողությունը: Ոչ, պայմանական ես. շատ անգամ արյունի գին է այն, շատ անգամ մնջամնեց գրկողութենաների: Գաղտնիքը, որով վարվում են առհասարակ վաճառականք, անմոտենալի են քեզ և քո նման մարդերի, դուք ծեր բարոյականությամբ և ծշմարտությամբ երբեք ճարելու չեք աշխարհի երեսին մի երևելի արձարագույն:
- Եթե չձարենք ևս, գոնե մեր խիղճը մաքուր է և հոգին հանդարտ, գոնե չկա մի մարդ որ ասե, թե այս ինչ մարդը իմ արծաթը կերավ, ինձ գրկեց և ինքը հարստացավ: Բայց ինչ որ ասում ես դու, թե բոլոր հարուստ մարդիկ յուրյանց հարստությունը ճարել են արյունով, գրկողութենով և այլ հանցանքներով, ես չեմ ընդունում այդ. կան մարդիկ, որ արդարությամբ վաստակում են, և ամենակալ տերը օրինել է նոցա վաստակը:

Հետաքրքրական է, որ երբ գրուցակիցը հրաժեշտ է տալիս և փոխադարձաբար հրավիրում է իյուր, տանտերը ներքուստ զարմանք է հայտնում «դորա անզգամության վերա, որովհետև այդքան կծու խոսակցությունից հետո, արդեն ինչ տեղի կար իրար իյուրասիրելու»: Ակնհայտ է, որ այս երկրորդ գրուցակիցն արդեն հիգեբանորեն պատրաստ էր անցնելու վիճաբանության, իսկ գուցե մեկեն նաև վեճի (քանի որ արդեն թեմայից անցել էր անձին՝ նրա «անզգամությանը»), մինչդեռ առաջին գրուցակիցը մտադիր է պահպանել բանավեճի ձևաչափը:

Ինչպես արդեն ասվեց՝ բանավեճից վիճաբանության, հետո՝ վեճի անցումից խուսափելու հիմնական պայմանը բուն թեմայից չշեղվելն է՝ դեպի դիմացինի անձնային հատկություններ: Նման խորհուրդներով հարուստ է հայ գրականությունը.

- «Ամեն մարդ մի որոշ հասկացողություն ու մի տեսակետ ունի: Պետք է լսել սարնասիրտ ու դեմք հանել իր հասկացողությունը»<sup>42</sup>:
- «Աշխատեցեք այսուհետև գործն քննել և ոչ գործավորն: Պատշաճ օրինաց համաձայն խոսեցեք իրարու հետ և ունայն վեճերով ժամավագառ մի լինիք»<sup>43</sup>:
- «Աշխատիր, որ խօսքը լինի համակ լոյս եւ ծշմարտութիւն– կայծակ, որ զարկելուց առաջ լուսաւորում է առարկաներու»<sup>44</sup>:

Հիրավի, ամեն որ կընդունի, որ մենք, սովորաբար, հակառակ կերպ ենք վարվում՝ «զարկում» ենք, հետո միայն լուսավորում՝ տեսնում ինչ արեցինք: Արդ, ականջալուր Գարեգին Նժդեհին՝ սովորենք «լուսավորել», պարզ տեսնել, թե ում և ինչ (նաև՝ ինչո՞ւ) ենք ասում. անտարակույս, այսկերպ մեր խոսքն ու վարքը կդառնան ավելի շրջահայաց և հանդուրժող, քան պատճառահետևանքային հակառակ պատկերի դեպքում:

<sup>42</sup> Հ. Թումանյան, Անտեղի ու անպետք միջոց, էջ 25:

<sup>43</sup> Հ. Պարոնյան, Կարծիք հայտնելու հազար ու մեկ եղանակ // Երկերի ժողովածու տասը հատորով, հատ. տասներորդ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, էջ 516:

<sup>44</sup> Գ. Նժդեհ, Բանտային գրառումներ, էջ 271:

Որքան մարդիկ բարեկիրթ են, այնքան դյուրին է վիճաբանությունից դարձը բանավիճային ոճի: Հակառակի վկայությունը մեզ հուշում է դարձալ Հովի. Թունանյանը. «Չատերը տեսած կլինին, թե ինչպես են վիճում ռամիկները: Վիճում են, օրինակ, իրանց քյոխվի կառավարության մասին. մեկն ասում է լավ է կառավարում, մյուսն ասում է՝ վատ: Վեճը տաքանում է, և հանկարծ տեսմում ես նեկը մյուսի դեմ գորաց. «Տո՛, դո՞ւ ես քյոխվի վրա խոսում. դու էն չե՞ս, որ Մադոն Դուկասին 20 մաներ ես պարտ», և եթե մի քիչ էլ ամոթից հեռու մարդ է, մի սուստ էլ ավելացնում է, թե «պարտ ես ու ատկազ ես անում»: Իհարկե, քյոխվի հարցում այս պարտըն իսկի գործ չունի, բայց նա հիշում է և մի սուստ էլ ավելացնում, թե ատկազ ես անում: Այս խուժանի լոգիկան և հատկությունն է»<sup>45</sup>. Առավել սուր է Գարեգին Նժեթի արձանագրունը. «Քչերն են այլս խտիր դնում միջոցների մեջ, և ոչ չի ուզում հասկանալ, թե կրքոտ վեճերի ժամանակ իսպառ մոռացվում է ճշմարտությունը, որ հայկական վեճը ընդհանրապես թշնամացնում է և ոչ թե համոզում»<sup>46</sup>:

Այսպիսով՝ «բանավեճ – վիճաբանություն – վեճ» եռաբաղադրիչ իրողությունը հստակորեն արտացոլված է հայ գրականության մեջ: Ավելորդ չէ նկատել, որ հատկապես հայերենն է բնութագրում խոսքային հաղորդակցման այդ փուլերը: Այլ լեզուներում հաճախ մեկ բառ է ընդամենը լինում՝ նշելու համար այդ երեք, թեպետ ներքնապես կապված, բայց տարբեր վիճակները: Ինչպես հայ գրականության արձանագրումները, այնպես էլ հեղինակների մտորումները օգտակար են թե ազգային ինքնաճանաչողության, թե՝ ազգահատուկ դաստիարակության առումով: Վերստին՝ հարկավոր է տարբերակված մոտեցում՝ մերժել մերժելին, ընդորինակել ընդօրինակելին:

### **Առածանին՝ հանդուրժողականության վարքականուն**

Հաճախ տեղին գործածված որևէ դիպուկ արտահայտություն, պատկերավոր ձևակերպում, առած և սասացվածք կարողանում է մարել կամ մեղմել թեժացող վիճաբանությունը. փոխադարձ անհանդուրժողության դրսւորումները: Հայոց առածանու մեջ պարփակված իմաստնությունը դարերի փորձության հիմքով երկուստեք ընկալվում է որպես անբեկանելի վճիռ խնդրո առարկայի շուրջ: Սասունցի Դավիթը, առաջին անգամ հանդիպելով Խանդութին, չի դիմանում նրա հմայքին, չափից դուրս կրքութ է համբուլում, և Խանդութը բառնցքի հարփածով հեռացնում է նրան: Վրդովված Դավիթին Խանդութը արժանապատվորեն պատասխանում է՝ «Դու քո հոր կտրիձն ես, ես էլ իմ»: Իսկ քեզի Թորոսն ասացվածքի միջոցով է բացատրում. «Առյուծն առյուծ է, ինչ էզ, ինչ արու»: Սա սեռային հիմքով գոյացող ամեն տեսակի խտրականությունը բացառող հրաշալի կարգախոս-հրամայական է. տղամարդը ոչ մի առավելություն չունի սուսկ որպես տղամարդ, կինը ոչ մի պակասություն չունի միայն կին լինելու պատճառով:

Այս առածանու տպավորիչ գործածության օրինակ Գուրգեն Մահարուց<sup>47</sup>: Դաշնակցականների անմիտ ահարեկչական վարմունքից վրդովված մի մեծահարուստ վանեցի (որին ևս ծրագրված էր վերացնել) հուզախորիվ խոսքն ավարտում է այսպես. «Զեզնից հ՞նչ կզնա, քանի-քանիների գլուխ

<sup>45</sup> Հ. Թունանյան, Իմ հաշիվը հրատ. ընկ. հետ // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտելիք» հրատ., 1994, էջ 88:

<sup>46</sup> Գ. Նժեթի, Որդիների պայքարը հայրերի դեմ // Երկեր, հատ. առաջին, Եր., ՀՀ արխիվային գործի գործակալություն, 2002, էջ 75:

<sup>47</sup> Գ. Մահարի, Այրվող այգեստաններ, Եր., «Հայաստան», 1966, էջ 217:

**Կերաք:** Չարոց՝ Ճարտար, բարոց՝ տիսմա՛ր, որ կասեն, դուք եք: Կերեք, թուրք մի կողմից, դուք՝ մեկել... Վանը կերեք, ծովի ջուրն էլ վրեն խմեք... մարսեք»: Եվ կուսակցական երևելի ղեկավարի վրա հզոր ազդեցություն է գործում հատկապես այս հատվածը, ստիպում բոլորովին այլ լույսով ընկալել սեփական ազգակիցների դեմ իրենց «հեղափոխական» վերաբերմունքը:

Հայ գրողների էջերում ուսանելի և օգտակար առածներն ու ասացվածքները հմտորեն ազուցված են խոսքի ընթացքին, շարադրանքին հաղորդում են պատկերավորություն, սեղմություն, ոճական այլ արժանիքներ, բայց ամենակարևորը՝ «հայկականություն», հայ մարդու դարերի իմաստնության փաստացի գործառություն նորանոր սերունդների վարչելակերպում:

- «Էօք էի՞ համար լավ է, քան մի սուրու ոչչարօ». այսկերաք է գոհունակությունն արտահայտում ծեր որսորդ տանտերը՝ հյուրընկալելով երիտասարդ երկու որսորդի<sup>48</sup>:
- «Լավություն արա ու թեկուզ ջուրը զցի՝ չի կորչի». սա է Հովհաննես Թումանյանի «Խոսող ծուկը» հեքիաթի բարոյախոսության ամփոփումը<sup>49</sup>:
- «Այստեղ են ասել՝ մեկի մորուքը վառվեց, սպասիր տաքանամ, ասաց մյուսը<sup>50</sup>»:
- «Շան հետ ընկերություն անելիս փայտը ձեռքից չպետք է զցես»<sup>51</sup>:
- «Մեջք մեջքի տանք՝ սարեր շուր տանք»<sup>52</sup>:

Այդուհանդերձ, չենք կարող ասել, թե առածնախն լիարժեքորեն գործածում ենք մեր հանրային կյանքի կազմակերպման մեջ, այդ թվում՝ որպես անհարկի անհանդուրժողականության մեջման և հանդուրժող խոսքի արմատավորման զորավոր միջոց: Արդ, հարկավոր է գիտակցել, որ հայ ժողովրդական ասացվածքներն ու առածները հայոց պատմական փորձի լավագույն ամփոփումն են և ներկայիս սերունդների կյանքի նորմատիվային կարգավորման լավագույն հիմքը: Առածնախն ուղղակի կոչ է անում հանդուրժողականության, զսպվածության, շրջահայցության, համբերատարության, սեփական վարչելակերպի համար պատասխանատվության, հասկացնում է, որ բախումները հաճախ հետևանք են մեր սեփական սխալի, անշրջահայց գործողությունների: Առածնախն հորդորում է մեզ խուսափել փուչ շաղակրատանքից, պարժենկոտությունից, գրեթիկ խոսելակերպից, անհաջող կատակից, սովորեցնում է դիմացինի խոսքի միջոցով թափանցել նրա ներաշխարհը: Հանդուրժող խոսքը երկխոսային բնույթի է. սա է առածնուր գլխավոր պահանջներից մեկը՝ ոչ միայն խոսել, այլև լսել, հակված լինել ավելի շատ լսելու գրուցակցին, քան խոսելու, գերադասել հակիրճ խոսքը.

- Աղբը քանի իրար տաս՝ հոտը կելնե:
- Անուշ հոտը վարդից կուգեն, նարդկությունը մարդից կուգեն:
- Բարդին կռացնես, թեզ վրա կընկի:
- Բերանդ բանալուն՝ աչքը բաց:
- Բզի գլխին բռունքով տալ չի ընի:

<sup>48</sup> Վ. Անանյան, Որսի հետքերով // Երկեր 4 հատորով, հատ. 1, Եր., «Սովետ. գրող», 1984, էջ 58:

<sup>49</sup> Հ.Թումանյան, Խոսող ծուկը // Ելժ, հատ. հինգերորդ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտելիք» հրատ., 1994, էջ 190:

<sup>50</sup> Հ.Խաչատրյան, Տիգրան Մեծ, Եր., «Հայաստան», 1972, էջ 45:

<sup>51</sup> Լ.Սողոմնյան, Կոտայքի արձիվները, Լու Անջելես, «Նովել», 2008, էջ 39:

<sup>52</sup> Գ. Նժդեհ, Մի խոսակցություն զորավար Գ. Նժդեհի հետ // Երկեր, հատ. առաջին, Եր., ՀՀ արխիվային գործի գործակալություն, 2002, էջ 498:

- Թուկի երկարն ալավը, խոսքի՝ կարձը:
- Իշու քացուց չեն խռովի:
- Լվի համար կարպետը չեն էրի:
- Խոսքը՝ մեկ, աստված՝ մեկ:
- Հազար անգամ թուր ու մուր, մեկ անգամ օրինակ տուր:
- Համբերե, որ համ բերե:
- Հավը դազի հավկիթ ածե, կը պատօի:
- Հորթը որ կովի առաջն ընկնի՝ գելը կը տանի:
- Մանր տրեխով՝ մեծ ռեխով:
- Մինձն իր տիղն ունե, պստիկն՝ իր տիղը:
- Շան հետ ընկերացիր, փետը ծերիցդ մի գցիր:
- Շատ լավին ման եկողը, շատ վատին կիանդիափի:
- Շատ մի՛ սիրիլ, ատել կա, շատ մի՛ ատիլ, սիրիլ կա:
- Ով որ կըսե ուզածը, կը լսե չուզածը:
- Վարը նստած, վեր մի՛ խոսիր:
- Տան մենձի մե աչքը քոր պտի եղնի, մե ականջն էլ խուլ:
- Քիչեն որ չը կշտանաս, շատեն չես կշտանա:

Հայոց առաջանին իմաստնության անժայրածիր ծով է, հայ դիտողունակ մարդկանց կենսավիկիլստփայական արձանագրումների վիթխարի շտեմառան, որոնք անցել են դարերի փորձությունը, զտվել, բյուրեղացել, դարձել են անվերապահ ձշմարտություն, ուստի մեր հանրային և անձնական կյամքը, այդ թվում՝ միջանձնային խոսքային հաղորդակցումը մեծապես շահելու է առաջանու գործածությամբ:

### Օգտագործված գրականություն

1. Ալազան Վ., Տառապանքի ուղիմերով (Հուշեր), Եր., «Խորիրդ. գրող», 1990:
2. Ազեկից Վ., Իմաստուն զինվորը // Առակներ, Եր., «Հայպետհրատ», 1951:
3. Այվազյան Ա., Կռվարարներ // Ընտիր երկեր (Վիպակներ, պատմվածքներ), Եր., «Սովետ. գրող», 1987:
4. Այվազյանց Բ., Աշոտ Երկաթ, Անիկ կործանումը, Եր., «Հայատան», 1964:
5. Անանյան Վ., Որսի հետքերով // Երկեր 4 հատորով, հատ. 1, Եր., «Սովետ. գրող», 1984:
6. Արմեն Մ., Վարդավան // Երկեր հինգ հատորով, հատ. առաջին, Եր., «Հայաստան», 1966:
7. Ղեմիրյան Դ., Հայը // Երկերի ժողովածու 14 հատորով, հատ. XIV, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987:
8. Ղեմիրյան Դ., Նոր մննումենտալ // Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. յոթերորդ (լրացուցիչ), Եր., «Հայպետհրատ», 1960:
9. Զեյթունցյան Պ., Արշակ Երկրորդ // Ընտիր երկեր երկու հատորով, հատ. Երկրորդ, Եր., «Սովետ. գրող», 1987:
10. Թոթովենց Վ., Բաց կապույտ ծաղկներ // Երկեր 3 գրքով, գիրք առաջին, Եր., «Սովետ. գրող», 1988:
11. Թորանյան Թ., Կարուտի ճամփաներով, Եր., «Խորիրդային գրող», 1989:
12. Թումանյան Հ., Խոսող ծուկը // Ելժ, հատ. հինգերորդ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտելիք» հրատարակչություն, 1994:
13. Թումանյան Հ., Անտեղի ու անպետք միջոց // Երկերի լիակատար ժողովածու, հատ. յոթերորդ, Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտելիք» հրատ., 1995:

14. Թումանյան Հ., Իմ հաշիվը հրատ. ընկ. հետ // Երկերի լիակատար ժողովածու, հատ. Վեցերորդ, Եր.: «Հ ԳԱԱ «Գիտելիք» հրատ., 1994:
15. Թումանյան Հ., Հայ գրողների ընկերության գրական երեկոները // Երկերի լիակատար ժողովածու, հատ. յոթերորդ, Եր., «Հ ԳԱԱ «Գիտելիք» հրատ., 1995:
16. Խաչալյան Ավ., Արու-Լալա Սահարի // Երկեր, Եր., «Սովետ. գրող», 1987:
17. Խաչատրյան Հ., Արտաշես, Եր., «Սովետ. գրող», 1980:
18. Խաչատրյան Հ., Տիգրան Մեծ, Եր., «Հայաստան», 1972:
19. Մաթևոսյան Հր., Տերը, Եր., «Սովետ. գրող», 1983:
20. Մահարի Գ., Այրվող այգեստաններ, Եր., «Հայաստան», 1966:
21. Մուրացան, Գևորգ Մարզպետովնի // Երկերի ժողովածու հինգ հատորով, հատ. երրորդ, Եր., «Հայպետհրատ», 1952:
22. Նալբանդյան Մ., Երկրագործությունը որպես ուղիղ ձանապարհ // Երկեր, Եր., «Սովետ. գրող», 1985:
23. Նալբանդյան Մ., Հիշատակարան // Երկեր, Եր.: «Սով. գրող», 1985:
24. Նար-Դոս, Պայքար // Երկերի ժողովածու երեք հատորով, հատ. երրորդ, Եր., «Հայպետհրատ», 1955:
25. Նար-Դոս, Սպանված աղավնին // Երկերի ժողովածու երեք հատորով, հատ. երրորդ, Եր., «Հայպետհրատ», 1955:
26. Նժդեհ Գ., Բանտային գրառումներ // Երկեր, հատ. առաջին, Եր., «Հ ԳԱԱ «Գրութիւն» գործի գործակալություն, 2002:
27. Նժդեհ Գ., Մի խոսակցություն գորավար Գ. Նժդեհի հետ // Երկեր, հատ. առաջին, Եր., «Հ ԳԱԱ «Գրութիւն» գործի գործակալություն, 2002:
28. Նժդեհ Գ., Որդիների պայքարը հայրերի դեմ // Երկեր, հատ. առաջին, Եր., «Հ ԳԱԱ «Գրութիւն» գործի գործակալություն, 2002:
29. Շանթ Լ., Ինկած բերդի իշխանությն // Երկեր, Եր., «Սովետ. գրող», 1989:
30. Շիրվանզադէ Ա., Քառո // Երկերի ժողովածու 10 հատորով, հատ. երրորդ, Եր., «Հայպետհրատ», 1959:
31. Պատկանյան Ռ., Վարժապետ // Երկեր, Եր., «Սովետ. գրող», 1980:
32. Պարոնյան Հ., Լրագրական դիցարանության ապիսը // Երկերի ժողովածու տասը հատորով, հատ. ութերորդ, Եր., «Հ ԳԱԱ ԳԱ հրատ., 1972:
33. Պարոնյան Հ., Կարծիք հայտնելու հազար ու մեկ եղանակ // Երկերի ժողովածու տասը հատորով, հատ. տասներորդ, Եր., «Հ ԳԱԱ ԳԱ հրատ., 1979:
34. Պարոնյան Հ., Օրակարգ // Երկերի ժողովածու տասը հատորով, հատ. տասներորդ, Եր., «Հ ԳԱԱ ԳԱ հրատ., 1979:
35. Պեշիկարաշլյան Մ., Կոռնակ // Երկերի լիակատար ժողովածու, Եր., «Հ ԳԱԱ ԳԱ հրատ., 1987:
36. Սողոմոնյան Լ., Կոտայքի արծիվները, Լոս Անջելես: Նովել, 2008:
37. Սևակ Պ., Ութնյակներ // Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. առաջին, Եր., «Հայաստան», 1972:
38. Ռաֆֆի, Կայծեր // Երկերի ժողովածու տասը հատորով, հատ. չորրորդ, Եր., «Հայպետհրատ», 1956:
39. Քոչար Հր., Մեծ տան զավակները // Երկերի ժողովածու վեց հատորով, հատ. երրորդ, Եր., «Հայաստան», 1966:
40. Քուչակ Ն., Հայրենի կարգավ, Եր., «Հայպետհրատ», 1957:
41. Օտյան Եր., Ընկեր Բ. Փանջունի, Եր., «Հայաստան», 1989:

**ВАЛЕРИЙ МИРЗОЯН**

Профессор кафедры „Менеджмента“ АГЭУ,  
доктор философских наук

**Толерантная речь в системе публичного управления.** – На основе анализа примеров из армянской художественной литературы в статье рассматриваются некоторые проявления толерантного и нетолерантного межличностного языкового общения в системе публичного управления. Особое внимание обращается выяснению типа аргументации при конкретном речевом акте. Обсуждаются основные условия обеспечения наибольшей толерантности в речевом общении, подчёркивается, в частности, необходимость более широкого и эффективного использования армянских народных поговорок и пословиц в качестве нормативной основы регулирования социального поведения личности.

**Ключевые слова:** система публичного управления, терпимость, нетерпимость, терпимая речь, спор, пословицы и поговорки как кодекс поведения.

JEL: B41, B59, R10, Z00, Z19

**VALERI MIRZOYAN**

Professor at the Chair of «Management» at ASUE,  
Doctor of Science in Philosophy

**Tolerant Speech in the System of Public Administration.** – The subject matter of this article is some reflections of tolerant and intolerant speech acts in Armenian literature, which can be seen as a mirror of Armenia's social behavior, especially in interpersonal speech communication. The investigation is concentrated on the argumentative base of different speech acts. The knowledge of the argument types used in each situation may be helpful for understanding the causes both of tolerancy and intolerance on human communication. One of main theses of the given article is to justify the importance of Armenian proverbs as a normative base for the regulation of human behavior in all areas of individual and social lives.

**Key words:** public administration system, tolerance, intolerance, tolerant speech, debate, controversy, dispute, proverbs as a code of conduct.

JEL: B41, B59, R10, Z00, Z19